



# Մ ՈՒՐ Բ Յ ԱԿՈՐ

## ՄՈՒՁՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԿԵՂԵՅԻ

### ԲԱՐԵԿԵՆՊԱՆ ԱՌԱՋԱԽՈՐԱՅ ՊԱՇԻ

9 ՓԵՏՐՈՒԲԱՐ 2025

Կիրակնօրեայ Ընթերցումներ	էջ 1
Ծանուցումներ	էջ 2
Անդրադարձներ եւ Խորհրդածութիւններ	էջ 3
Ողորմութեան Կանչ Մը (Շար. 32)	էջ 4

### ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (61.10-62.9)

**Ե**րոսաղէմը Տիրոջ պարգեւած ուրախութեամբ պիտի խայտայ եւ Աստուծոյ պիտի ցնծայ, որովհետեւ Աստուած փրկութեան զգեստ հագցուց անոր եւ ուրախութեան պատմութեանով պատեց զայն. փեսայութեան պսակը դրաւ անոր գլխուն եւ հարսնութեան զարդերով պնդեց զայն:

Ինչպէս հողին մէջ նետուած սերմերը կը ծլին, կամ ինչպէս պարտէզին տունկերը կը ծաղկին, այնպէս ալ Տէր Աստուծոյ արդարութիւնը եւ ուրախութիւնը պիտի ծագին Երոսաղէմի մէջ եւ բոլոր ժողովուրդները ապանատես պիտի ըլլան: Ուստի պիտի չլռեմ, Սիոնի սիրոյն, անդադար պիտի աշխատիմ Երոսաղէմի համար, մինչեւ որ անոր արդարութիւնը ծագի լոյսի պէս եւ անոր փրկութիւնը փայլատակէ ջահի մը պէս:

Այն ատեն հեթանոսները պիտի տեսնեն արդարութիւնը, ո՛վ Երոսաղէմ, բոլոր թագաւորները պիտի տեսնեն քու փառքը եւ քեզ պիտի կանչեն նոր անունով մը որ Տէրը ինք պիտի տայ քեզի:

Տիրոջ ձեռքին մէջ վայելուչ պսակ մը պիտի ըլլաս. արքայական թագ պիտի ըլլաս Աստուծոյ ձեռքին մէջ: Այլեւս բնաւ “Լքուած կին” պիտի չկոչուիս, ո՛չ ալ երկիրդ “Աւերակ” պիտի անուանուի. այլ ես քեզ “Նախասիրածս” պիտի կոչեմ, իսկ երկիրդ՝ “Բնակուած Շէն”, որովհետեւ Տէրը պիտի հաւանի քեզի եւ երկիրդ բնակութեամբ պիտի խոնուի: Ինչպէս երիտասարդ մը եւ կոյս մը նոր ընտանիք կը կազմեն, այնպէս ալ զաւակներդ քեզի հետ նոր ընտանիք պիտի կազմեն. եւ ինչպէս փեսան հարսով կ’ուրախանայ, այնպէս ալ Աստուածը

Մի՛ լռե՛ք, ո՛վ աղօթողներ, հանգիստ մի՛ տա՛ք Աստուծոյ...

քեզմով պիտի ուրախանայ: Ո՛վ Երոսաղէմ, պարիսպներուդ վրայ պահապաններ կարգեցի որոնք անդադար գիշեր-ցերեկ Տիրոջ պիտի աղաղակեն: Մի՛ լռե՛ք, ո՛վ աղօթողներ, հանգիստ մի՛ տա՛ք Աստուծոյ, մինչեւ Երոսաղէմը վերականգնէ եւ զայն երկրի պարծանքը դարձնէ:

Տէրը հետեւեալ երդումը ըրաւ, որ պիտի կատարէ իր փառքով, իր զօրաւոր բազուկով. «Ա՛լ բնաւ ցորենդ թշնամիներուդ պիտի չտամ որպէս կերակուր, օտարներու զաւակները պիտի չխմեն գինիդ որուն համար դուն վաստակեցար. այլ դո՛ւն պիտի հնձես ու դուն վայելես քու բերքդ եւ փառք տաս Տիրոջ, այգեկուծք պիտի ընես ու դուն խմես գինիդ սրբարանիս սրահներուն մէջ»:

### ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՏԻՄՈԹԵՆՍԻ ԳՐԱԾ ԵՐԿՐՈՐԳ ՆԱՄԱԿԷՆ (2.15-26)

**Ա**շխատէ որ Աստուծոյ աչքին ըլլաս այնպիսի մշակ մը որ իր գործերուն համար ամչնալիք բան մը չունի, որպէս մէկը՝ որ ուղիղ կերպով կ’ուսուցանէ Աստուծոյ ճշմարիտ պատգամը:

Հեռո՛ւ կեցիր հաւատքի ճշմարտութիւնները խեղաթիւրող պարապ վիճաբանութիւններէ, որոնք հեռզհետէ մարդիկը Աստուծոյ հեռացնելու կը ծառայեն միայն: Այդպիսի խօսքերու ձգած թոյնը քաղցկեղի պէս կը կրծէ մարդս: Այդպիսի խեղաթիւրող վիճասէրներ էին Հիմենոս եւ Ֆիլետոս, որոնք ճշմարտութեան շեղեցան եւ շատերու հաւատքը քանդեցին, ըսելով թէ մեռելներու յարութիւնը արդէն տեղի ունեցած է: Բայց Աստուծոյ դրած հաստատուն հիմը կանգուն կը մնայ: Անոր վրայ գրուած է. «Տէրը կը փնտրէ անոնք որոնք իրն են», եւ, «Ով որ Տիրոջ կը պատկանի՝ թող հեռու մնայ

անիրաւ գործերէ»:

Մեծ տունի մը մէջ միայն ոսկիէ եւ արծաթէ անօթներ չեն ըլլար, այլ նաեւ փայտէ ու կաւէ անօթներ: Յստակ է թէ առաջինները թանկագին են, իսկ միւսները անարժէք: Արդ, ով որ ինքզինք մաքրէ նման մեղքերէ, կը դառնայ Աստուծոյ համար թանկագին անօթ մը, մաքուր եւ պատրաստ՝ ամէն տեսակի բարի ծառայութիւն մատուցանելու:

Փախի՛ր երիտասարդական ցանկութիւններէն: Արդարութեան, հաւատքի, սիրոյ,

Արդարութեան,  
հաւատքի,  
սիրոյ,  
խաղաղութեան  
ու սրբութեան  
հետամուտ  
եղիր, անոնց  
պէս՝ որոնք  
մաքուր  
սիրտով  
կ'աղօթեն  
Աստուծոյ:

խաղաղութեան ու սրբութեան հետամուտ եղիր, անոնց պէս՝ որոնք մաքուր սիրտով կ'աղօթեն Աստուծոյ: Յիմար եւ անօգուտ վէճերէն հրաժարէ, գիտնալով որ անոնցմէ կուրծքներ կը ծագին: Աստուծոյ ծառան պէտք չէ կռուի, այլ պէտք է հեզ ըլլայ բոլորին հանդէպ, կարող ըլլայ աւետարանը սորվեցնելու, ներողամիտ ըլլայ որպէսզի

քաղցրութեամբ խրատէ հակառակողները, որովհետեւ Աստուած միշտ ալ առիթ կուտայ որ անոնք դառնան իրենց սխալէն եւ ճշմարտութիւնը ճանչնան, եւ զգաստանալով դուրս գան սատանային որոգայթներէն, որոնց մէջ բռնուած՝ անոր կամքը կը կատարեն:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՅՈՀՎԱՆՆՈՒ  
(6.15-21)**

**Յ**իսուս երբ գիտցաւ թէ պիտի գան բռնութեամբ զինք թագաւոր ընելու, դարձեալ լեռը ելաւ, առանձինն:

Երեկոյեան, Յիսուսի աշակերտները ծովեզերք իջան եւ նաւակ մտնելով սկսան երթալ ծովուն դիմացի կողմը, դէպի Կափառնառում: Երբ մթնցաւ, տակաւին Յիսուս իրենց եկած չէր: Ծովը զօրաւոր հովէն կ'ալեկոծէր:

Աշակերտները հազիւ հինգ կամ վեց քիլոմետր նաւարկած էին, երբ տեսան Յիսուսը, որ ծովուն վրայէն քալելով կը մօտենար նաւակին: Բոլորը սարսափեցան: Յիսուս ըսաւ անոնց. «Ես եմ, մի՛ վախնաք»: Անոնք կ'ուզէին զինք նաւակին մէջ առնել, բայց արդէն նաւակը հասաւ այն տեղը, ուր կ'երթային:

**ԱՅԹԵԼԵԾԷ՛Ք  
ԵԿԵՂԵՇԻՈՅ  
ՌԻՄԱՏԵՏՐԻ ԷՁՈ  
ԵՒ  
ՁԵՐ ՀԱՒԱՆՈՒԹԻՒՆ  
յԱՅՏԵԾԷՔ (like).**

[www.facebook.com/  
SourpHagopChurch-  
Montreal](http://www.facebook.com/SourpHagopChurch-Montreal)

**ԱՅԹԵԼԵԾԷ՛Ք ԱՎԵՒ  
Ս. ՅԱԿՈՔ  
ԱՌԱՋՆՈՐՈՒԱՆԻՍ  
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՇԻՈՅ  
ԿԱՅԲԷՁՈ՛  
[www.sourphagop.net](http://www.sourphagop.net)**

**ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ  
ՁԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԵՐՈ  
ԱՆՈՐՕՔ ԿԱՏԱՐԵՇԷՔ ԿԱՊՈՒԷԼՈՎ  
ԵԿԵՂԵՇԻՈՅ ԳՐԱՍ:**

**ՍՈՅՆ ԹԵՐԹԻՎՈՒ Ե-ԱՃԱԿՈՎ ԱՏԱՆԱԼՈՒ  
ՀԱՄԱՐ ՁԵՐ Ե-ՀԱՍԾԷՆ ՈՒՊԱՐԿԵՇԷՔ  
eglise58@sourphagop.com**

## Անդրադարձներ Եւ Խորհրդածութիւններ

Չեկուցում Թիւ 5.- Ս. Պատարագի մասին դասախօսութիւններու շարքին նախորդ գեկուցումները կարելի է գտնել Կիրակնօրեայ Թերթիկի 22 Դեկտեմբեր 2024-ի, 12 Յունուար 2025-ի, 19 Յունուար 2025-ի, 26 Յունուար 2025-ի համարներուն մէջ:

Այս գեկուցումիս նիւթը՝ Հայ եկեղեցւոյ Պատարագամատոյցը կանխող հանգրուանն է:

Յիսուս իր յիշատակը կատարել աւանդեց, բայց ծիսական կարգաւորութիւն մը չտուաւ:

Մատթէոսի եւ Մարկոսի աւետարաններէն, Պօղոս առաքեալի կորնթացիներու գրած առաջին նամակէն գիտենք, թէ Յիսուս հացը առնելով գոհութիւն յայտնեց Աստուծոյ, կտրեց եւ աշակերտներուն տուաւ: Ապա գինիի բաժակը առաւ, գոհութիւն յայտնեց Աստուծոյ եւ աշակերտներուն տուաւ: Ղուկասի աւետարանին մէջ, կայ առաջին եւ երկրորդ բաժակ մը: Առաջին բաժակը առնելով՝ Յիսուս գոհութիւն կը յայտնէ Աստուծոյ: Ապա հացը առնելով, զայն կտրելէ եւ աշակերտներուն տալէ առաջ եւս գոհութիւն կը յայտնէ Աստուծոյ: Ընթրիքէն ետք, դարձեալ բաժակը կ'առնէ, բայց կը խօսի «Նոր Ուխտ»ի հաստատման մասին: (Այս հաստատման մասին նաեւ կը կարդանք թէ՛ Մատթէոսի եւ Մարկոսի աւետարաններուն մէջ, եւ թէ՛ Պօղոս առաքեալի կորնթացիներու գրած առաջին նամակին):

Ենթադրուած է, թէ Ղուկասի նկարագրութիւնը կուգայ Չատկի յիշատակը կատարող ընթրիքի ծիսական աւանդութենէն: Բայց այն աւանդութեան մէջ չորս բաժակներու մասին կը խօսուի: Գուցէ Ղուկաս աւետարանիչ երկու բաժակի մասին խօսած է, որովհետեւ իր համայնքը՝ հացի բեկանումէն առաջ եւ վերջ բաժակի կրկնակ արարողութիւն ունէր:

Յիսուս Չատկուայ ընտանեկան ընթրիքի ամբողջ ծէսը ըրա՛ւ: Ըստ իս՝ այո: Իսկ թէ ինչո՞ւ Մատթէոս, Մարկոս եւ Պօղոս առաքեալ միայն մէկ բաժակի բարձրացում նկարագրած են:

Երկու վարկած:

Առաջին վարկած. թէեւ Վերջին Ընթրիքին նշանակութիւնը գատկական էր, բայց քանի վաղագոյն համայնքին համար Յիսուսի յիշատակը կատարելը վերածուած էր պարբերական արարողութեան, գուցէ ճիշդ չէր տեսնուած գատկական լրիւ ծէսին կիրարկումը, եւ միայն՝ անկէ առնուած հացի եւ վերջին բաժակի արարողութիւնը:

Երկրորդ վարկած. աւանդութիւն մը կայ, ըստ որուն Ս. Պատարագի արարողութեան նախնագոյն օրինակը Երուսաղէմի առաջին եպիսկոպոս Յակոբոս առաքեալէ է, որ նահատակուած է 44-ին: Սակայն այս առաքեալին անունով Պատարագը, որ հասած է, երկար է: Կենթադրուի, թէ անիկա Դ. դարու Պատարագներէ խմբագրութիւն մը է:

Անկասկած, այս խմբագրեալ Պատարագը չէր կրնար առաքեալէն ըլլալ: Յակոբոս առաքեալ, կը կարծեմ համաձայնաբար Պետրոս եւ Յովհաննէս առաքեալներուն, սահմանած էր ծիսական կարգ մը, հաւանաբար կեդրոնին դնելով հացի բեկանումի եւ բաժակի մը արարողութիւն: Եւ այն բաժակը գատկական ընթրիքի ծէսին վերջին բաժակն էր: Յիսուս վերջին բաժակին կապած էր Նոր Ուխտի հաստատման մասին իր խօսքը: Ուստի, էական բաժակն էր անիկա: Վերջին Ընթրիքը Նոր Ուխտի հիմնարար դէպքն է:

Վաղագոյն եկեղեցին Յիսուսի յիշատակը կատարելու համար՝ հաց բեկանեց եւ բաժակէ ըմպեց: Նաեւ, շատ հաւանաբար, սրբազան գիրքերէ ընթերցումներ ըրաւ, քարոզներ տուաւ, սաղմոսներ երգեց, աղօթքներ ըրաւ: Պաշտամունքային կարգը այսպէս պարզ եղած ըլլալու էր: Հալածանքներու պատճառով, առաքեալներ, որոնց մէջ նաեւ մեր առաջին լուսաւորիչները պիտի ցրուէին, իրենց հետ պիտի տանէին այս պարզ կարգը:

**ԳՔ**  
**(Շարունակելի 5)**





## ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԿԱՆՉ ՄԸ ԱՊՈԹՔԱՆԵՐ ԾԷՆՔԱԻՆ

ՀԵՏԻՆԱԿ՝ ՀԷՆՐԻ ՆՈՒԸՆ

ԹԽԵՐԳԱՆՈՒԹԻՒՆ՝ ԿԱՐՕ ՄՐԿ. ՆՈՒՆՈՒՍԵԱՆԵՐ

### ՊՐԿՈՒՄ

Քաղցր Տէր, այսօր կը մտածէի՝ աշակերտներուդ հետ խորհրդաւոր հանդիպումիդ մասին՝ Տիբերիայի լճափին: Հետդ նախաճաշեցին: Իրականութեան մէջ, դուն զիրենք հրաւիրեցիր: Դուն հացը առիր եւ իրենց տուիր, ինչպէս նաեւ՝ ձուկը:

Կը կանգնիմ այս խորհրդաւոր հանդիպումին առջեւ: Քաշողական կը գտնեմ այս

մօտիկութիւնը, սակայն նաեւ՝ հեռաւորութիւն մը կը զգամ. կը գիտակցիմ որ ընտանութիւն մը կայ, բայց նաեւ՝ որոշ վերապահութիւն. խնդրութենէ զգածուած եմ, բայց նաեւ՝ խորին երկիւղէ տարուած. կը ճանչնամ ներկայութիւնդ, բայց նաեւ տակաւին կ'ապրիմ փորձառութիւնը բացակայութեանդ: Ծշմարտապէս կը հասկընամ, որ աշակերտներդ ոչ մէկը բաւարար համարձակութիւնը ունէր հարցնելու. «Ո՞վ ես դուն»:

Տէր, ինծի կը հասկցնես, թէ մինչ ինքզինքդ ինծի կը յայտնես, միեւնոյն ատեն կը ծածկուիս ինձմէ, թէ մինչ կը հրաւիրես որ հետդ ուտեմ՝ կը խնդրես ինձմէ որ քեզի չդպչիմ: Յաճախ այս պրկումը կը զգամ մէջս, եւ կ'ուզեմ որ անհետանայ: Ոչ մէկ հեռաւորութիւն, վախ, անհանգստութիւն կը ցանկամ: Բայց ո՞վ եմ ես այնքան համարձակ ըլլալու, որ այդպիսի բան մը խնդրեմ: Թող երախտագէտ ըլլամ, Տէր, որ զիս կը կանչես, մեղաւոր մը, եւ հաց ու ձուկ կու տաս ինծի: Պատրաստ չեմ փառքդ տեսնելու: Ապա թէ ոչ՝ պիտի մեռնէի: Ինքզինքդ ինձմէ կը պահես՝ որպէսզի ապրիմ ու բիրեղանամ: Ծնորհակալութիւն, ով Տէր: Ամէն:

(Շար. 32)



ՍՈՒՐԵ ՅԱԿՈԲ  
Առաջնորդաւոր Մայր Եպիսկոպոս



## ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

**Մանուկները Աստուծոյ Նուիրելու Տօն**  
Նախատօնակ

Հինգշաբթի, 13 Փետրուար 2025  
Երեկոյեան ժամերգութիւն՝ ժամը 19.00-ին  
ապա՝ մանուկներու նուիրում եւ մոմակառութիւն